

Ն. Ս. ՊՕՂՈՍ Զ.

ՍՐԲԱԶԱՆ ՔԱՂԱՆԱՅԱՊԵՏ

Այն օրը առանձին էինք. ինքն ու ես զէմ զիմաց: Հանդիսաւոր, չարժուծ օր մը եղած էր: Մեր համալսարանի մարմարապատ ընդարձակ դահլիճը պարապ էր հիմա. հոս ու հոն, գետնի վրայ կը նշմարուէին ճղմուած հրաւիրատուներ եւ աթոռներու խառնակուած շարքեր. նորընտիր Ծիրանաւորները հաղիւ քսան վայրկեան էր որ ձգած էին դահլիճը՝ ծափերու եւ խանդավառ բացազանհութիւններու մէջ: Այդ պահուն՝ քովնոր սենեակէ մը դուրս ելած էր նորընտիրներու մէջէն ամէնէն ծանօթը եւ ամէնէն աննշմարելին, ու կամարակապներու տակէն դէպի դուրս կը յառաջանար՝ ուր իրեն կը սպասէր սեւ ինքնաշարժ մը: Ամփոփած էր ծիրանեփայլ վերարկուն՝ երկու ձեռքերուն մէջ: Կը մօտենամ երկիւղածութեամբ, կը համբուրեմ Աջը, կը փափաքիմ երկու խօսք բռնի, բայց ոչինչ կ'արտաբերեմ: Կը նայի ինծի իր անոյշ ժպիտովը, չնորհակալութիւն կը յայտնէ ու հարց կու տայ թէ ո՞վ եմ: Հա՛յ եմ՝ կը պատասխանեմ՝ Միւրթարեա՛ն եւ ուսանող այս համալսարանին մէջ: Հա՛յ՝ կը կրկնէ, նորընտիր Ծիրանաւորը, երանի՜ քեզի. նախապէս ժողովուրդի մը գաւակը: Եղեքաբախտ, բայց միշտ արի ժողովուրդ... բարի Հայերու միայն հանդիպած եմ, կ'աւելցնէ. ոմանք ինծի աջակից ալ եղած են. շատ եռանդուն եւ նուիրուած անձեր էին... չեմ կարծեր որ չար Հայեր ալ գոյութիւն ունենան, կ'ըսէ ու կը ժպտի:

Այդ հեղ, ժպտազէմ Ծիրանաւորը, Միւրթարեա՛ն Առաջնորդն էր, Վսեմ. Մանթինի: Հինգ տարի վերջ՝ Ծիրանաւոր Մանթինի

նիւն անունը կ'աւետուէր Ս. Պետրոսի պատշգամէն, համայն մարդկութեան, իրը յաջորդ Յովհաննէս ԻԳ. Բարի Պապին: Դժուարին էր լաւապէս ընտրութիւն մը կատարել, մտածեցինք ամէնքս. կարծէք ինքնաբերաբար զգացինք թէ անարազ թափով պիտի շարունակէր ու առաջ տանէր «Բարի Քահանայապետին» բացած լուսաւոր ուղին:

Սիքստեան մատրան ծինելու լինէր զուլայ դուլայ բարձրացող սպիտակ ծուխէն կը նախազգայինք թէ հոն, այդ խորհրդաւորութեան մէջ, տեղի ունեցած էր արդի պատմութեան ամենակարճատեւ ընտրութիւններէն մէկը: Յաջորդել Յովհաննէս ԻԳ. ի ծանր էր, ինչպէս զժուարին է ինքնին սեւէ յաջորդականութիւն, մասնաւորապէս նկատի առնելով առարկայական պայմանները ընկերային մարդկային եւ պատմական իրականութեան՝ ուր «Բարի Քահանայապետին» յաջորդը կանչուած է զօրծելու: Գաղտնիք մը չէ մեզի՝ թէ ո՛րքան բարդ ու անհամաձայն ժամանակներու մէջ կ'ապրինք, ի՛նչ խնդիրներ կայն կը խռովեն, դադարաւորական ի՛նչ պայքարներ եւ ընկերային վտանգներ կը սպառնան:

Ս. Պետրոսի հրապարակին վրայ հարիւր հազարէն աւելի մարդ հաւաքուած է. ամէնքը ակնկալութիւններու մէջ են: Եւ ահա կը բացուին սուղի վարազոյրները: Կը հռչակուի անունը նորընտիր Քահանայապետին. Պօղոս Զ. ու քիչ վերջ կ'երեւի ինք, Հայրապետը, սպիտակահագեւրձ. կ'օրհնէ ժողովուրդը, որ խանդավառ ծափերով կ'ողջունէ իր նորընտիր Հայրապետը:



Ուլ է, սակայն, Ծիր. Մոնթինի:

Ծնած է 26 Սեպտ. 1897ին, Պրեշլայի շրջանի Քոնչեղիոյ զիւլին մէջ: Ծնւոյ 4 օր ետք, իր մկրտութեան օրը, Լիւդուիկ Կարմեղոսէն երկինք կը թռչէր 24ամեայ, վարդեր տեղացոյ, փոքրիկ Թերեզան Մանուէլ-Յիսուսին:

Օրինակը բարեպաշտ ծնողներուն, որոնք բնականաբար միջավայրը կը կենդանացնէին, ուր ծնողական զուգակցութիւնն աշխարհի ներդաշնակօրէն կը զուգուէր քրիստոնէական ապրումը կեանքի մը հրապոյրը, պատրաստեց զինքը խիստ գտնուելու իր անձին հանդէպ եւ բարձր նող ուրիշներու, ամէն բանի մէջ նախապատուութիւն տալով հոգեկան արժէքներուն:

Հայրը, ճորճիոյ Մոնթինի (1860-1943), Իտալիոյ քրիստոնէայ ընկերակցութեան շարժումին ռազմականերէն մէկը եղաւ, բարեկամ Տոն Ստուրցոյի: Երիտասարդ էր տակաւին, երբ իրեն յանձնուեցաւ կաթողիկէ թերթի մը, Cittadino di Brescia, խմբագրութիւնը, ուր երեսուն տարի շարունակ տարածեց քրիստոնէայ ժողովրդավարութեան մը առողջ սկզբունքները, որ ի վերջոյ պիտի յաղթանակէին Իտալիոյ մէջ:

Փոքրիկն Յովհաննէս, այսպէս կը կոչուէր ապագայ Քաջանայակերտը, հօրմէն ժառանգած էր մտային հզօր ոյժ եւ ինքն-իր վրայ իշխելու անսովոր կարողութիւն: Յուզիթ, մայրը, տուած էր իրեն փափկանկատութեան եւ զուարթասրտութեան սուր զգացումը. ամուսինն նման երկիւղած եւ բարեպաշտ հօգի մըն էր. մեծաւ անկէ տարի մը վերջ, 1944ին: Երկու եղբայրներէն Լուդովիկոն, ծերակուտական է եւ փոխ-նախագահ Ստրագուրիի Եւրոպական Խորհուրդին: Յրանչեքոն բրժըղութիւն կ'ընէ, Պրեշլայի մէջ:

Ապագայ Պօղոս Զ. իր գաղական ուսումները կատարեց Յիսուսեան Հայրերու Զեղարէ-Արիւի վարժարանին մէջ, իսկ աստուածաբանական ընթացքը՝ Պրեշլայի կղերանոցին մէջ: Նոյն քաղաքի մայր տաճարին մէջ, 1920ի Մայիս 29ին, ճո-

վանի Մոնթինի քաջանայ ձեռնադրուեցաւ. ապա մեկնեցաւ Հռոմ՝ պետական եւ Գրիգորեան համալսարաններուն մէջ ուսումները կատարելագործելու համար: 1923ին փորձառութիւն ստանալու համար, Լեհաստան զբոսեցաւ, իր կցորդ վարչաւիոյ քաջանայակերտական Նուր-րակին: Նոյն տարին պաշտօնեայ անուանուեցաւ Սրբ. Քաջանայակերտի Պետական Քարտուղարութեան. միաժամանակ վարելով Հռոմի կաթողիկէ երիտասարդներու կազմակերպութիւնը, բաւարարութիւն տալով անոնց հոգեւոր պահանջներուն:

Գեր. Մոնթինի, ուսանողական շրջանակներու մէջ շատ ժողովրդական դէմք մը դարձաւ. կ'ըմբռնէր զիրենք, զիտէր սիրելի դարձնել ինքզինքը՝ անոնց. իր զիւրմբունքի, կենսունակ, իմաստալից խօսքը կը հրապուրէր զանոնք. կը մասնակցէր երիտասարդական բոլոր հանդէսներուն եւ ուրախութիւններուն: Զանազան բարեգործական շարժումներ կազմակերպած էր ժողովրդական թաղերէն ներս: Հոն էր, տղաքներուն քրիստոնէական վարդապետութիւն սորվեցնելու, մը կըրտութիւններ կատարելու, ամուսնութիւններ օրինաւորելու, նիւթապէս օգնելու, բանթոյներուն ձեռք տալու համար. տիեզերական ապագայ Հովիւր, Հռոմի արուարձաններու մէջ է որ կը սկսէր ճանչնալ ու սիրել իր ժողովուրդը. եւ այդ հեղ, խոնարհ հաւատացեալները երիտասարդ վարդապետին մէջ գտան իրենց իսկական Առաջնորդն ու Հովիւր, որ օր մը Աստուծոյ Նախախնամութիւնը բովանդակ մարդկութեան պիտի չնորհէր:

1933ին հրատարակեց «Ներածութիւն Քրիստոսի ուսումին», 176 էջերէ բաղկացած իր անդրանիկ հատորը որ ամփոփումն էր երիտասարդներուն ուղղած իր բանախօսութիւններուն. տիպոսն իսկ այս զրքին բաւ է ցոյց տալու այս 35ամեայ քաջանային միութեան կեանքը Քրիստոսի հետ:

17 Սեպտ. 1937ին, Գեր. Մոնթինի փոխանորդ կարգուեցաւ Քաջանայակերտ-

Պետական Քարտուղարութեան. ծանր էր այս նոր պարտականութիւնը. ստիպուեցաւ շատ մը ուրիշ զբաղանքներէ հրաժարել, արձակուրդի եւ քունի ժամերը կըրճատել. այնուհետեւ իր կեանքը կը դառնար քաջանայակերտական ապրանքներու եւ իր պաշտօնարանին շուրջ. իր պաշտօնակիցներու վկայութեան համաձայն, զործունէութեան այդ տենդային շրջանին՝ միշտ կանոնաւոր, համբերող եւ խաղաղ կեանք մը վարած է: 10 Յունիս 1940ին Գեր. Մոնթինի անհանդիստ էր ու խռոված. նոյն օրը Իտալիան պատերազմի մէջ մտած էր:

1954ին, յետ մերժած ըլլալու Պիոս ԺԲ.ի կողմէ տարի մը առաջ առաջարկուած ծիրանին, Գեր. Մոնթինի Միլանի արքեպիսկոպոսական թեմին առաջնորդ ընտրուեցաւ, փոխարինելով հանդուցեալ մեծ Ծիրանաւոր Շուստերը: Ասիկա եղաւ իր կեանքի ամենացայտուն անկիւնադարձներէն մէկը: Աշխարհի մեծագոյն թեմերէն մէկը նկատուող Լոմպարտական այդ համայնքը ներկայ քաղաքակրթութեան յաջող մանրանկարն է, ուր ճարտարարուեստի արագընթաց զարգացումին հետեւանքով ծնած ընկերական եւ բարոյական հարցերը՝ օրըստօրէ աւելի կը մօտեցնէին զինքը պարզ ու խոնարհ գաղափարներ, անոնց շահերուն հետ՝ փրկելու համար նաեւ հոգեկան անբաւ հարստութիւնները, որ հսկայաքայլ աճող նիւթապաշտութեան մը ճիրաններուն մէջ գտնապարտութեան սահմանուած էին:

1957ի աշնան, ընդհանուր զօրաշարժի ենթակեց թեմական բոլոր ոյժերը՝ մեծ առաքելութիւն մը սկսելու համար Միլանի մէջ, որուն երկու տարիէ կը պատրաստուէր. ծրագիրն էր մարդկային խիղճերու մէջ կրօնական վերադարձում մը առաջ բերել. այդ օրերուն կարելի էր զինքը տեսնել պարզ քաջանայի մը հանդերձանքով՝ եկեղեցիներու, զպրօցներու, զործատուներու, հիւանդանոցներու եւ բանտերու մէջ. կը քարոզէր, կը բացատրէր, կը մխիթարէր, կը քաջալերէր, կը կանգնէր, կը խրախուսէր: Ծանց-

յաւ մօտէն միեւնոյն Հօր զաւակները զիրար բաժնող փշոտ կէտերը. ինք՝ իրրեւ քաջ բժիշկ մը՝ սկսաւ բոլոր խոցերուն դարմանը խորհիլ. անմշակ հոգը պտղաբերել սկսաւ. եւ ահա օր մը երկնային Մշակը կանչեց իր հաւատարիմ ծառան՝ անոր յանձնելու համար Եկեղեցւոյ անծայրածիր անդամստանը, որ անհովիւ մընացած էր: Այնի՛ւ, ծառայ բարի եւ հաւատարիմ, բաւ Տէրը, որովհետեւ ի սակաւ հաւատարիմ եղեր, ի վերայ բազմաց կացուցից զբեղ:

Աշխարհիս ակնկալած ընկերական բարեքները, միութեան եւ խաղաղութեան հեռանկարը՝ որոնց մարդս կը տենչայ անձկազին, համայն մարդկութեան միջեւ եղբայրութեան եւ համերաշխութեան հովին՝ որ յայտնութիւն մը եղաւ աշխարհիս համար, շնորհիւ Յովհաննէս ԻԳ.ի ջանքերուն, եւ այն խանդավառութիւնը՝ որ ահա կրկին կը վերանորոգուի, թող ջերմօրէն համակէ բարեացակամ բոլոր սրտերը՝ նորանոր ակնկալութիւններու եւ եկեղեցական նոր դարաշրջանի մը այս արշալոյսին:

Կը յիշեմ թէ մարդկայնօրէն որքան զժուարին կը գտնէինք Պիոս ԺԲ.ի արժանաւոր յաջորդ մը նշանակելը, երբ 1958ին աչքերը կը փակէր առ յաւէտ: Հինգ տարի յետոյ, երբ բովանդակ մարդկութիւնը կ'ողորար Յովհաննէս ԻԳ. Քաջանայակերտը, դարձեալ միեւնոյն մարդկութիւնն էր որ հարց կու տար՝ թէ ո՞վ կարող էր լրացնել ձգուած պարապը:

— Աստուծոյ հրաշքը — պիտի պատասխանէ հաւատացեալ հօգին — որ մէկն է այն անհամար նշաններէն՝ որ Քրիստոսի Եկեղեցին անխոցելի կը դարձնեն: Աստուածային հոգատարութեան շօշափելի արտայայտութիւններն են անոնք, ծնունդը Ս. Հոգիին, որ ողին է Ս. Եկեղեցւոյն, որ ներկայ է, կը բարձրացնէ, կ'աշխարհայէ ընտրեալներու մէջէն ամէնէն ընտիրը. երէկ Յովհաննէս ԻԳ. կը կոչուէր ան, այսօր նոր անուն մը ունի՝ Պօղոս Զ:

Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԶՏԻԿԵԱՆ